ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՕԲԵԼԱՆԻ ՏՕՆԱԿԱՐԳԸ

I

Էջմիածնում

1) Ուրբաթ, հոկտ. 11-ին, երբ. ժ. 5-ին Նորին Վեհափառութիւնը պատգամաւորներ և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով իջնում է Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թարգմանչաց յիշատակին կատարվելիք նախատոնակին։

2) Շաբաթ, ս. Թարգմանչաց տօնին, հոկտ. 12-ին, առ. ժ. 8-ին հանդիսաւոր երթ Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի Օշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների

Պատարագ (ժ. 10-ին) ս. Մեսրոպի գերեզմանի վրա։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին. պատգամաւորների բանախօսութիւններ։

Ճաշ (ժ. 2-ին). ուղերձների ընթերցում։

3) Կիրակի, հոկտ. 13-ին, ժ. 9-ին, Մայր Տաճարի Իջման սեղանի վրա հանդիսաւոր պատարագ և ապա հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ՝ ժ. 12-ին ճեմարանում ցերեկոյթ երգեցողութեամբ և երաժշտութեամբ։

Ճաշ՝ ժ. 3-ին, հեռագիրների ընթերցում։

Շաբաթ և կիրակի երեկոները ժ. 7-ին և երկուշաբթի առ. ժ. 10-ին ճեմարանում գիտական բեռեռատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խնդիրների շուրջը։

Ծանօթ.—Շաբաթ և կիրակի երեկոները երաժշտութիւն և հրավառութիւն վանքի և ճեմարանի բակում։

II

Հայոց բոլոր թեմերում

1) Շաբաթ, հոկտ. 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, եկեղեցական դասի, դպրոցական ամբողջ կազմի և ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների և աշակերտութեան ներկայութեամբ՝ հանդիսաւոր պատարագ և բացատրութիւն երկու մեծ տօների պատմական նշանակութեան։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան արուեստի վաստակաւորների յիշատակին։

2) Կիրակի, հոկտ. 13-ին, հանդիսաւոր պատարագ և ապա հայրապետական մաղթանք նոյն կազմով։

Նոյն օրը, տեղական պայմաններին նայելով, կազմակերպել գրական և երաժշտական ցերեկոյթ կամ երեկոյթ՝ եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Հանդէսը բանալ «Հայր մեր»-ով և ս. Թարգմանչաց կամ Էջմիածնի շարականով։

Ծանօթ.—Ըստ եկեղեցիներ ունեցող կենտրոններում եկեղեցական հանդէսները կարող են կատարվել մէկ կամ մի քանի եկեղեցիներում տեղական հոգևոր վարչութեան կարգադրութեամբ։

* * *

Այս ծրագիրը կազմված է յատուկ Էջմիածնին հենթակայ հաստատութիւնների համար։ Միւս բոլոր հաստատութիւնները խնդրվում է պատուել այս համազգային մեծ տօնը պատշաճաւոր հանդէսներով և յաւերժացնել բարենպատակ ձեռնարկութիւններով։

Հ Ր Ա Մ Ա Ն

(Նամակ խմբագրութեան)

—

Էջմիածին, 14 սեպտեմբերի

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճ ընդունութիւնքով՝ Էջմիածնի կենտրոնական Յօբելենական Ճանձնաժողովս պատիւ ունի խնդրել ձեզ, որ հաճիք մասնակցել համազգային մեծ Յօբելենական հանդէսներին, որոնք տեղի պիտի ունենան Էջմիածնում տարւոյս հոկտեմբ. 12-ին, 13-ին և 14-ին։

Ներկայացուցիչ ուղարկելու դէպքում խնդրվում է նախօրօք յայտնել Ճանձնաժողովիս։

Նախագահ Յօբել. Ճանձնաժողովի՝

Գալուստ Տէր-Մկրտչեան

Անդամ-քարտուղար՝

Գէորգ վ. Զէյրեքեան